ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԵՂԻՆԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՓՈՒՋՅԱՆ

Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի զանգվածային ջարդերի պատմությունը գնալով ավելի ու ավելի է արդիականություն ձեռք բերում և գրավում եվրոպական պատմագիտության ուշադրությունը։ Ուշագրավ է, որ հետազոտողները ձգտում են ոչ թե կրքեր բորբոքել, այլ հասնել պատմական իրականության բացահայտմանը։ Նրանք կարևոր ուշադրություն են դարձնում նաև այն հանգամանքին, որ թուրք պատմաբանները, լրագրողները, քաղաքական գործիչները և այլն անտեսելով պատմության տրամաբանությունը, համառ կերպով փորձում են կեղծ լույսի տակ ներկայացնել 1915 թ. հայ ժողովրդի դեմ գործված «ահավոր, աներևակայելի ոճիրը»։

*Խնդրո առարկա պրոբլեմը նորովի լուսաբանելու և թուրքական պատմագիտության մեջ իշխող վերոհիշյալ հակագիտական միտումը մերկացնելու առումով ուշագրավ մենագրություն է Ժան-Մարի Գարզուի աշխատությունը**, *որը սեղմ, զուսպ և ընդհանրացված բանիմաց մի հակաճառություն է այն կեղծումների և նենգափոխումների դեմ, որ տարիներ ի վեր թուրքական պատմագիտությունը համառորեն փորձում է կիրառել Արևմտյան Հայաստանում թուրքերի «պատմական իրավունքների», հատկապես հայկական հարցի ու հայերի ցեղասպանությանը վերաբերող խնդիրներում։*

Քաջատեղյակ լինելով հայ և թուրք ժողովուրդների պատմության հարցերին, լրագրող Ժան-Մարի Գարզուն հիմնավոր և նպատակասլաց կերպով հերքում է թուրք պատմաբանների հակագիտական դրույթները։ Ընդ որում, աշխատությունն արժեքավորվում է նաև նրանով, որ նրանում առաջնությունը տրված է փաստերին և պատմական զարգացման կուռ տրամաբանությանը։

Հատկանշական է նաև, որ հեղինակը չի ցանկացել վեճի բռնվել այս կամ այն թուրք պատմաբանի հետ, որովհետև նա այդ պատմաբանների կատարած նենգափոխումները համարում է ոչ թե առանձին հեղինակների գրչի գործ, սուբյեկտիվ կարծիք կամ վրիպում, այլ պաշտոնական թուրքական իշխանությունների կողմից որոշակի նպատակով պարտադրված «տեսություն», որն ապացուցելու անշնորհակալ գործին է լծված համարյա ամբողջ թուրքական պատմագիտությունը։

Հեղինակը նշում է, որ անցյալի և ներկայիս թուրք պատմաբանները որոշակի նկատառումներով պնդում են, որ մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հայն ու թուրքը ապրում էին «հաշտ ու խաղաղ» և Օսմանյան կայսրությունում հայկական հարց գոյություն չուներ։ Գարզուն նրանց

---

* Jean-Marie Garzou, Un Genocide exemplaire. Armenie 1915, Paris, 1975, 249 p. *(Ժան-Մարի Գարզու, Մի խսկական ցեղասպանություն, Հայաստան, 1915, Փարիզ, 1975, 249 էջ)։*

պատասխանում է՝ նախ հայկական հարցը Արևելյան հարցի բաղկացուցիչ մասն էր, իսկ Արևելյան հարցը ծնունդ է առել ավելի վաղ։ Այնուհետև նա բերում է համոզիչ փաստեր այն մասին, որ դեռևս XIX դ. սկզբին, մասնավորապես 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում և պատերազմից հետո հայ ժողովուրդը վերածվեց օսմանյան կառավարության հալածանքի օբյեկտի, կազմակերպվեցին մասնակի ջարդեր, որոնց հետևանքով Արևմտյան Հայաստանից հայության մի ստվար զանգված դիմեց արտագաղթի դեպի Կովկաս, և Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ ուղղակի հայաթափ եղան։

Առարկելով թուրք պատմաբաններին, որոնք անհիմն կերպով պնդում են, թե իբր հայկական հարցը Թուրքիայում ծնունդ առավ Սան-Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումով ու Բեռլինի կոնգրեսից հետո, և դա համարում Ռուսաստանի «դավերի» արդյունք, Գարզուն ցույց է տալիս, որ հայկական հարցը կար և գոյություն ուներ դեռևս 1877—1878 թթ. պատերազմից շատ առաջ, իսկ Բեռլինի կոնգրեսում այն ձեռք բերեց միայն միջազգային «պաշտոնական ճանաչում» (էջ 45)։ Իր այս թեզն ապացուցելու համար նա բերում է բազմաթիվ փաստարկներ։ Այսպես, նա ցույց է տալիս, որ Բեռլինի կոնգրեսից դեռ տասնամյակներ առաջ սուլթանական կառավարությունը սկսել էր ձեռնարկել մի շարք միջոցառումներ, որպեսզի Հայաստանում չկրկնվի այն, ինչ տեղի էր ունեցել Սերբիայում և Հունաստանում, երբ վերջիններս ձեռք բերեցին անկախություն։ Գարզուն այդ կարգի միջոց է համարում 1861 թ. ընդունված այսպես կոչված վիլայեթների վարչության օրենքը, ըստ որի Արևմտյան Հայաստանի Հայաբնակ Դիարբեքիրի, Մուշի, Վանի, Բիթլիսի և այլ վիլայեթներ միավորվում էին մեկ վարչական միավորի մեջ և ստանում Քրդստան անվանումը։ «Հայերի համար վիլայեթների օրենքի անհապաղ գործադրությունը նշանակում էր անգամ վերացնել Հայաստան հասկացությունը» (էջ 29—30)։ Նա նշում է, որ Օսմանյան կայսրության ազգաբնակչության կարևոր մասն ընդգրկող Անատոլիայի երկրամասը նախքան այդ օրենքի ընդունումը կազմում էր մեկ վիլայեթ և բնականորեն կոչվում էր «Էրմենիստան այալեթի», այսինքն՝ «Հայաստանի շրջան»։ Մինչդեռ, նոր օրենքով «Էրմենիստան այալեթի»-ն վերացվեց, որի հետևանքով այլևս պաշտոնապես Հայաստան չկար (էջ 30)։

Հեղինակի կարծիքով այդ վարչատարածքային վերաձևման նպատակն էր քրիստոնյա ու մահմեդական ազգաբնակչության տեղաբաշխման հետ այնպես խաղալ, որ վերոհիշյալ նահանգներում բնիկ «հայ ազգաբնակչությունը ոչ մի տեղ մեծամասնություն չկազմի» (էջ 30)։ Այդ նպատակով թուրքական իշխանությունները խարդախում էին նաև հայության թվաքանակին վերաբերող տվյալները։

Բացի այդ, սուլթանական կառավարությունը մի կողմից զանազան միջոցներով (ծանր տուրքեր, կողոպուտ, կյանքի ու գույքի անապահովություն) կասեցնում էր հայերի աճը, նրանց տնտեսական զարգացումը, մյուս կողմից՝ հայկական գավառներում քրդեր, չերքեզներ և այլ մահմեդական (հաճախ քոչվոր) ցեղեր վերաբնակեցնելու ճանապարհով հայերին մղում էր արտագաղթի։

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս հեղինակը, դեռևս անցյալ՝ XIX դարի 60-ական թվականներին հայ ժողովրդի գլխին ամպեր էին կուտակվում։

Անդրադառնալով հիշյալ թվականներին Թուրքիայում քրիստոնյաների և հատկապես հայերի կացությանը, Գարղուն աշխատում է բացահայտել հայկական հարցի սոցիալ-տնտեսական արմատները։ «Բացեք,— գրում է նա,— եվրոպական կառավարությունների կողմից կազմված որևէ պաշտոնական փաստաթուղթ, լինի դա «Կապույտ» կամ «Դեղին» գիրքը, և դուք կգտնեք անպատիժ մնացած կողոպուտների, առևանգումների, սպանությունների և կամայական պատիժների պատմության մի ամբողջ շարան, որոնց ամենուրեք ենթարկվում էին քրիստոնյաները» (էջ 32)։

Գարղուի գրքի երկրորդ բաժինը, որը վերնագրված է «Պատրանքների ժամանակաշրջան», նվիրված է հայկական հարցի պատմությանը Բեռլինի կոնգրեսից մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Հեղինակը ցույց է տալիս, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը հայ ժողովրդի մոտ հույսեր ծնեց Սերբիայի, Հունաստանի, Բուլղարիայի և կայսրության մյուս քրիստոնյա նահանգների օրինակով թոթափելու օսմանյան լուծը։ Այդ հույսերի նախադուռը հանդիսացավ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, որը սուլթանին պարտավորեցնում էր Արևմտյան Հայաստանում իրականացնելու բարեփոխություններ։

Գարղուն այն հաստատ համոզմունքն է հայտնում, որ Արևմտյան Հայաստանը թուրքական կառավարող շրջանների մտայնությամբ կայսրության համար ուներ առավել կարևոր նշանակություն, քան նրա եվրոպական տիրույթներից որևէ մեկը։ Որպես ապացույց նա բերում է այն փաստը, որ սուլթան Աբդուլ Համիդ II-ը 1878 թ. հունիսի 4-ին Անգլիայի հետ կնքած պայմանագրով Կիպրոսը զիջում էր նրան, փոխարենը ստանալով հավաստիացումներ, որ Անգլիան կօգնի Թուրքիային՝ պահպանելու իր տիրապետություններն Արևմտյան Հայաստանում։ Գարղուն գտնում է, որ Կիպրոսն Անգլիային նվիրելու դիմաց սուլթանն ազատություն ձեռք բերեց Անատոլիայի քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ իր ստանձնած պարտավորությունները չկատարելու և իր հին քաղաքականությունը շարունակելու համար։ «Մի խոսքով.— եզրակացնում է նա,— Բեռլինի վեհաժողովում ոչինչ չարվեց հայերի գլխավերևում կուտակված ամպերը ցրելու համար» (էջ 52)։ Հույսեր կապելով Բեռլինում հայկական հարցի վերաբերյալ ընդունված 61-րդ հոդվածի հետ. «հայերը բացահայտորեն սխալվեցին», որովհետև «ռուսական զենքի շնորհիվ ձեռք բերված ավարը բաժանելուց հետո մեծ պետությունները մի կողմ քաշվեցին»։ «Բեռլինի կոնգրեսից հետո,— շարունակում է Գարղուն,— Աբդուլ Համիդը փորձում էր ժամանակ շահել և, վախենալով, որ եվրոպական միջամտության դեպքում կարող էր հարցականի տակ դրվել իր տերիտորիալ գերիշխանությունը», արագացրեց հայերին բնաջնջելու պրոցեսը (էջ 62—63)։

Այդ ժամանակվանից սկսած օրենք հասկացությունն Արևմտյան Հայաստանում փոխարինվեց քմահաճ կամքով։ Ծայր առան բռնությունների ու հալածանքների նոր ալիք, կողոպուտ ու թալան, որոնք իրականացվում էին ինչպես թուրքական վարչության, այնպես էլ մոլեռանդ մահմեդական ամբոխի ու քոչվորական ցեղերի միջոցով։

XIX դ. ընթացքում Թուրքիայի կառավարող շրջանների այդ քաղաքականության գագաթնակետը հանդիսացան 1890-ական թվականների զանգվածային ջարդերն Արևմտյան Հայաստանում։

Հանգամանորեն կանգ առնելով 1894—1896 թթ. ջարդերի պատմության վրա, Գարզուն վճռականորեն հերքում է թուրք պատմաբանների այն անհեթեթ պնդումը, թե իբր հայ ազգային կուսակցությունների հրահրած ապստամբական շարժումներն էին պատճառը, որ թուրքական կառավարությանը ստիպեցին ձեռնարկելու պատժիչ միջոցներ։ Գարզուն այն տեսակետին է, որ հայերի «ապստամբական շարժումները» ոչ այլ ինչ էին, եթե ոչ իրենց ազգային գոյատևումը փրկելու օրհասական ճիգեր և որ թուրքական ջարդերը ոչ թե հաջորդել, այլ նախորդել են Սասունում և մի շարք այլ վայրերում հայերի ինքնապաշտպանական ելույթներին։

Անդրադառնալով 1890-ական թվականների «հայաջինջ փոթորկի» կազմակերպման բուն պատճառներին, հեղինակը բերում է 1899 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի այն հայտարարությունը, թե «Անատոլիայում մեզ պետք է մենակ մնալ» (էջ 99)։

Գարզուն աչքաթող չի արել այն իրողությունը, որ մի շարք վայրերում հայերը ջարդարարներին ցույց են տվել կորովի դիմադրություն։ Դրանով նա հերքում է եվրոպական այն հայատյաց քաղաքական գործիչների և գրչակների հերյուրանքը, որ իբր հայերը զուրկ էին դիմադրության ոգուց և մորթվեցին առանց որևէ ընդդիմության։

Գարզուն անդրադարձել է նաև 1890-ական թվականների ջարդերի զոհերի թվաքանակի ճշտմանը։ Նա քննադատում է եվրոպական տերությունների դեսպանների առաջ քաշած 28.000 զոհերի առասպելը։ Համադրելով բազմաթիվ եվրոպական տվյալներ, նա առավելապես հավատ է ընծայում գերմանացի Յ. Լեփսիուսի հրապարակած տվյալներին, ըստ որոնց կոտորածներից և դրանց հետևանքով առաջացած սովից ու տարափոխիկ հիվանդություններից տուժել են 546.000 հայեր։ Նա բերում է նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներն այն մասին, որ զոհերի թվաքանակը շուրջ 300.000 էր։ Կոտորածները կատարվում էին սիստեմատիկորեն, պաշտոնապես, ընդհուպ կառավարական մակարդակով, որոնց մասնակցում էին ոստիկանությունն ու բանակը։ Ի դեպ, դրանք սկսվում և դադարում էին զինվորական շեփորի ազդանշանով։ Ամենաշատ վայրագություն ցուցաբերող սպաներն ու պաշտոնյաները ոչ միայն չէին պատժվում, այլև պարգևատրվում էին շքանշաններով և առաջ քաշվում։ Բոլոր կոտորածները սկսվում և դադարում էին միևնույն օրը և միևնույն ժամին» (էջ 74—75)։

Հեղինակը ցույց է տալիս, որ կոտորածները հազիվ էին ավարտվել, երբ եվրոպական տերությունները՝ բավարարվելով Արևմտյան Հայաստանում սուլթանի խոստացած բարեփոխումներ իրագործելու դատարկ խոստումներով, մոռացության մատնեցին հայկական հարցը։

Անդրադառնալով սուլթան Աբդուլ Համիդ II-ի սրդեգրած պանիսլամիզմի գաղափարախոսությանը, Գարզուն նշում է, որ սուլթանը «կայսրության փրկությունը տեսնում էր պանիսլամիզմի մեջ» (էջ 44)։ Այլ կերպ ասած՝ հետադիմական այդ ուսմունքը թուրքական կառավարող շրջանները ներքին քաղաքականության բնագավառում ցանկանում էին օգտագործել կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ, իսկ արտաքին քաղաքականության բնագավառում՝ իրենց նվաճողական նկրտումներին հագուրդ տալու համար։

Գարզուն բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, որ աբդուլ-Համիդ-յան «զուլումի» ողջ շրջանը, ընդհուպ մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը, լի էր Արևմտյան Հայաստանում հայերի աստիճանական ոչնչացման փաստերով։ Այդ է պատճառը, որ հայ ժողովուրդը ոգևորությամբ ընդունեց Երիտթուրքական հեղաշրջումը և սահմանադրության վերականգնումը Թուրքիայում։ Հեղինակը շեշտում է հայերի ակտիվ մասնակցությունը երիտթուրքական վերնախավային հեղաշրջմանը և բացահայտում դրա պատճառները։ Նրա կարծիքով հեղաշրջումից հետո մի կարճատև ժամանակահատվածում հայ-թուրքական հարաբերությունների մեջ տեղի ունեցան որոշակի դրական տեղաշարժեր։

Սակայն 1909 թ., երբ արդեն թվում էր, թե փակվում է Թուրքիայի պատմության «զուլումի» դարաշրջանը, տեղի ունեցավ Ադանայի ջարդը։ Վերջինս իրականացվեց այն բանակի մասնակցությամբ, որը երիտթուրքերը Մակեդոնիայից ուղարկել էին Կիլիկիա, իբր թե այնտեղ «կարգը վերականգնելու համար»։ Ավելի քան 20.000 նոր զոհեր խլած այդ կոտորածը, ինչպես նշել է Գարզուն, շոթափեցրեց, սակայն, երիտթուրքերի հետ համագործակցող հայ ազգային կուսակցություններին։ «Այդ կոտորածում,— գրում է նա,— Թուրքերի պատասխանատվությունը բացահայտ է, այն հաստատվեց նաև օտարերկրացիների վկայություններով. սակայն հայ քաղաքական ղեկավարները (ակնարկում է դաշնակցության ղեկավարներին—Վ. Բ., Հ. Թ.) վարանում էին հավատալ, որ երիտթուրքական կառավարության անդամների՝ իրենց գործընկերների ձեռքերը թաթախված են գործի (հայերի՝ արյան—Վ. Բ., Հ. Թ.) մեջ...։ Հայ ղեկավարները ընդունում են պատահարի թեզը և շարունակում պառլամենտական խաղը...» (էջ 95)։

Այսպիսով հեղինակը այն համոզմունքին է, որ հայ ազգային կուսակցությունները խաբվեցին իթթիհադականների ժողովրդավարական ազատությունների խոստումներով և մոլորության մեջ գցեցին իրենց սեփական ժողովրդին։

«Սահմանադրության հռչակումով Թուրքիայում, բացի կենտրոնական կառավարությունից, ուրիշ ոչինչ հիմնովին չփոխվեց»,— եզրակացնում է Գարզուն (էջ 100)։ «Եվ թեև երիտթուրքական հեղափոխությունից հետո անցնող ամեն օր հայ ժողովրդին մի քայլ ավելի էր մոտեցնում գենոցիդին, սակայն հայերը (իմա՛ դաշնակցությունը—Վ. Բ., Հ. Թ.) շարունակում էին պաշտպանել նոր վարչակարգը» (էջ 100)։

Հեղինակը ցույց է տալիս, որ իթթիհադականների կառավարման տարիներին արևմտահայությունը մշտապես ապրում էր սարսափի մեջ, որովհետև «անընդհատ լուրեր էին շրջում հայերին կոտորելու մասին»։ Քայլ առ քայլ հետևելով երիտթուրքերի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքական գծի մանրամասներին և բացահայտելով դրանց մթին ծալքերը, Գարզուն հանգամանորեն ցույց է տալիս, թե ինչպես Իթթիհադի ղեկավարների մոտ ծնվեց հայերին ֆիզիկապես բնաջնջելու հրեշավոր ծրագիրը։

Դեռևս 1911 թ. Սալոնիկում տեղի ունեցած «Միասնություն և առաջադիմություն» կոմիտեի համաժողովում, որտեղ քննարկվում էր Իթթիհադի դիրքորոշումը Օսմանյան կայսրության քրիստոնյա տարրի նկատմամբ, գրեթե միաձայն որոշվում է, որ Թուրքիայում բնակվող քրիստոնյա տարրը պետք է ենթարկել մի այնպիսի վիճակի, որ նա ստիպված լինի մահմեդականու-

թյուն ընդունել կա՞մ միայն անվամբ պահի իր ազգությունը։ Այդ նպատակով առաջ են քաշվում «Թուրքիան թուրքերի համար» և «տիրող տարրի» (միլլեթը հաքիմե) լոզունգները։

Այնուհետև, 1912—1913 թթ. բալկանյան պատերազմներից հետո, երբ Թուրքիան զրկվեց իր եվրոպական տիրույթների մեծագույն մասից, թուրքական կառավարող շրջանները եկան այն եզրակացության, որ հարցականի տակ է դրվում նաև իրենց տիրապետությունը Արևմտյան Հայաստանում, և որ հայկական հարցը պետք է լուծել հայերի զանգվածային ջարդերի միջոցով։ Գրքում բազմաթիվ փաստեր են բերվում այն մասին, որ դեռևս 1913 թ. վերջերից թուրքական կառավարողները միջոցներ էին ձեռնարկում հարմար պահին հայերին բնաջնջելու համար։ Առանձնապես հետաքրքրական են գերմանական ու ռուսական աղբյուրներից քաղված այն նյութերը, որոնք վերաբերում են պատերազմի նախօրեին Էրզրումում, Բայազետում և այլ վայրերում մահմեդական ազգաբնակչությանը զենք բաժանելուն և այլն։ Իսկ «1914 թ. հունվարին,— գրում է Գարզուն,— արևելյան նահանգներում ամեն ինչ պատրաստ էր կոտորածի համար, սպասում էին միայն մայրաքաղաքից գալիք ազդանշանին» (էջ 110)։ «1915 թ. մարտի 18-ին Դարդանելում դաշնակիցների ռազմական ձախողումը որոշ իմաստով կանաչ լույս վառեց վաղուց պատրաստված օպերացիայի համար։ Վտանգը հեռացել էր, և թուրքական կառավարությունը կարող էր ազատ ձեռքերով գործել..., իսկ թշնամի տերություններն ի վիճակի չէին միջամտելու» (էջ 120—121)։ Եվ, այսպես, 1915 թ. ապրիլի 24-ին, արևածագի հետ, ողջ կայսրության տարածքում սկսվում է համատարած ջարդը։

Գարզուն ցույց է տալիս, որ հայերի ցեղասպանությունը իրագործվեց վայրագ մոլեռանդությամբ, որ հայկական գենոցիդը «օրինակելի» գենոցիդ է, որովհետև այն իր մեջ պարունակում է «գենոցիդ հասկացության բոլոր տարրերը»։

Գարզուն հերքում է թուրք պատմաբանների այն կեղծիքը, թե իբր հայերը Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի օգնությամբ 1915 թ. ապրիլին Զեյթունում և Վանում բարձրացրել էին ապստամբություն և պետության անվտանգությունն ապահովելու համար կառավարությունը ստիպված է եղել աքսորել նրանց։ Գարզուն գտնում է, որ այդ իրադարձությունները ոչ թե աքսորի պատճառ էին, այլ «պատրվակ», որ «ապստամբության պատճառը կոտորածներն էին, և ոչ թե հակառակը»։

Այնուհետև հեղինակը հանգամանորեն քննարկում և ճշտում է հայերի բնաջնջման տարբեր փուլերը և նրա իրականացման հրեշավոր, անմարդկային և սահմռկեցուցիչ ձևերը։ Նա ցույց է տալիս, որ 1917 թ. գարնանը հայերի բնաջնջումը հիմնականում ավարտված էր, որովհետև այլևս չկային հայաբնակ գյուղեր ու քաղաքներ, «չկային տղամարդիկ, որպեսզի սպանեն, կանայք՝ որպեսզի առևանգեն, երեխաներ՝ որպեսզի խեղդեն» (էջ 142)։ Թալաաթը կարող էր հայտարարել՝ Օսմանյան կայսրությունում «հայկական հարց այլևս չկա» (էջ 136)։ Գարզուն գտնում է, որ Թուրքիայի հայության առնվազն 75 տոկոսը բնաջնջվեց, մնացած մասը ցրվեց աշխարհով մեկ։ 1923 թ.՝ հանրապետական Թուրքիայի ստեղծման պահին, «այլևս Հայաստան չկար Թուրքիայի տարածքի վրա»։

Որն էր հայերի ցեղասպանության կազմակերպման հիմնական նպատակը, հարցնում է հեղինակը և անվարան կերպով պատասխանում. «Թուրքական կառավարության բոլոր միջոցառումները ուղղված էին հայ ազգի՝ որպես էթնիկական տարրի գոյության դեմ» (էջ 143)։

Աշխատության վերջին գլխում բերվում են ականատեսների վկայությունները, որոնք նոր լույս են սփռում հայերի ցեղասպանության մանրամասների վրա։ Հեղինակն ընդարձակ քաղվածքներ է բերում գերմանացի, ամերիկացի, ավստրիացի և եվրոպացի բազմաթիվ այլ հյուպատոսների, զինվորականների, լրագրողների վկայություններից, որոնք 1915—1916 թթ. գտնվում էին Թուրքիայում և ականատես էին եղել ցեղասպանության համարյա բոլոր փուլերում հայ ժողովրդի ապրած արհավիրքներին։

Աշխատության վերջում զետեղված են գենոցիդի վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր փաստաթղթեր, որոնց մի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ։ Դրանցից հատկապես ուշագրավ են 1919—1920 թթ. Կ. Պոլսում տեղի ունեցած «Իթթիհադ վե Թերաքքը» կոմիտեի ղեկավարների դատավարության փաստաթղթերը, որոնցով Թուրքական դատարանն ընդունեց այն, ինչն այսօր համառորեն ժխտվում է թուրքական կառավարող շրջանների և թուրք պատմաբանների կողմից, որոնք ի արդարացումն իթթիհադականների՝ պնդում են, թե հայերի նկատմամբ ոչ մի գենոցիդ տեղի չի ունեցել։ «Դա զրպարտություն է»,— արձանագրում է Գարզուն։ Այդ կեղծիքը հերքվում է նաև նրանով, որ պատերազմից հետո պաշտոնական Թուրքիան Անտանտի դաշնակիցների բարձրագույն խորհրդին գրած իր 1919 թ. հունիսի 17-ի հուշագրում ընդունում էր, որ Իթթիհադի կողմից կազմակերպվել են արևմտահայության զանգվածային ջարդեր։

Իր գրքում Գարզուն բերում է հայերի ցեղասպանության նկատմամբ Թուրքիայի կառավարող շրջանների վերաբերմունքը բնութագրող երկու փաստ։ Առաջին, 1973 թ. փետրվարին Մարսելում բացվեց «1915 թ. թուրք դեկավարների հրամանով ի կատար ածված հայկական գենոցիդի մեկ ու կես միլիոն նահատակների հիշատակին» նվիրված հուշարձան։ Թուրքական կառավարությունը, ինչպես գրում է Գարզուն, ի նշան դժգոհության Ֆրանսիայից ետ կանչեց իր դեսպանին, որը Ֆրանսիա վերադարձավ միայն մեկ ու կես տարի հետո։ Երկրորդ, 1974 թ. մարտին Նյու Յորքում ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի մարդու իրավունքների հանձնաժողովի նիստում Թուրքական կառավարության ներկայացուցիչ Օլքայը բողոքեց այն բանի դեմ, որ հանձնաժողովի զեկուցագրում ակնարկված է «հայերի այսպես կոչված կոտորածի մասին»։ Նա դիտել տվեց, որ զեկուցուղը «շփոթել է գենոցիդի ոճրի բնորոշ հատկանիշները պատերազմի բնականոն հետևանքների հետ»։ Անհրաժեշտ համարելով «հակիրճ ու օբյեկտիվ կերպով ներկայացնել Թուրքիայի պատմության այդ ժամանակաշրջանը», Օլքայը կրկնել է հայերի «դավաճանության» մասին հին երգը և եզրակացրել. «Հայկական գենոցիդի առասպելը ծնվեց այն բանից, որ Թուրքիայի արևելյան նահանգներում ըմբոստացած հայերի խմբերը տեղափոխվեցին Օսմանյան կայսրության այլ շրջաններ, որտեղ նրանք այլևս չէին կարող վտանգել երկրի պաշտպանությունը» (էջ 209—210)։

Գարզուի գրքի եզրակացությունն այն է, որ Թուրքական կառավարության իրականացրած ցեղասպանությունը որևէ արդարացում չունի։ Որ «այս անհա-

վասալի պատմությունը օրինակելի է և արդիական» և հայկական գենոցիդը սոռացության չի մատնվել առաջադեմ մարդկության կողմից։

Գարզուի գրքի կարևորագույն եզրակացություններից է նաև այն, որ հայ ժողովուրդը իր մեջ գտավ ուժ ու կենսունակություն ցեղասպանության մղձավանջն ապրելուց հետո կերտելու իր ազգային վերածնունդը՝ հանձինս Սովետական Հայաստանի։

ФРАНЦУЗСКИЙ АВТОР ОБ АРМЯНСКИХ ПОГРОМАХ И ГЕНОЦИДЕ

ВААН БАЙБУРТЯН, ОВАНЕС ТОПУЗЯН

Резюме

Работа Жан-Мари Гарзу посвящена геноциду армян, осуществленному турецкими правящими кругами в 1915 г. На основе многочисленных документальных материалов, публикаций и разноязычных источников автор показывает, что с начала XIX в. Османская империя в отношении армянского населения проводила политику физического истребления, апогеем которой стал геноцид армян, организованный младотурецким правительством.

Опровергая лживые версии турецкой историографии о том, что, исходя из военных соображений, в 1915 г. турецкое правительство в отношении армянского населения организовало депортацию, автор, опираясь на многочисленные неопровержимые факты, показывает, что в действительности это был настоящий геноцид целого народа.